«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- --- 2022 թվականի N ------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով **ՀՀ վարչապետի 2021 թվականի «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին»** N 1316-Ա որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

բ.3-րդ կետում «2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

գ. 4-րդ կետում «3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

դ. 9-րդ կետում «Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի» բառերը փոխարինել «Անձի ֆունկցիոնալությունը գանահատող հանձնաժողովի» բառերով.

ե. 12-րդ կետում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն

ձեռք բերած» բառերով.

զ. 19-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «19. Զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից կազմված ծառայությունների անհատական ծրագրի շրջանակներում).

2) Որոշման N 5 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 9-րդ ենթակետում «1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

բ.2-րդ կետի 10-րդ ենթակետում «2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

3) Որոշման N 7 հավելվածի՝

ա. 4-րդ կետի 6-րդ ենթակետում «Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները» բառերը փոխարինել «Անձի ֆունկցիոնալությունը գանահատող հանձնաժողովները» բառերով.

բ.5-րդ կետի 1-ին ենթակետի «ե» կետում «բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների համար» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալությունը գանահատող հանձնաժողովների համար՝ ՖԳՀ» բառերով.

գ.Ձև N 1-ի 5-րդ կետի 4-րդ կետում «բժշկասոցիալական» բառը փոխարինել «ֆունկցիոնալության գանահատում» բառերով.

4) Որոշման N 8 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

5) Որոշման N 10 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

բ.3-րդ կետում «2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

գ. 4-րդ կետում «3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերը փոխարինել «Ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով.

դ. 15-րդ կետում «Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի» բառերը փոխարինել «Անձի ֆունկցիոնալությունը գանահատող հանձնաժողովի» բառերով.

ե. 18-րդ կետում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ձեռք բերած» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից։